ԿԱՐԾԻՔ

Տաթևիկ Զորիկի Վաթյանի

«Սոցիալ-հոգեբանական օտարացման հիմնախնդիրը ներթիմային արժեքապահանջմունքային կողմնորոշումների համակարգում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված ԺԹ.00.03 – «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

«Սոցիալ-հոգեբանական օտարացման հիմնախնդիրը ներթիմային արժեքապահանջմունքային կողմնորոշումների համակարգում» վերնագրով ատենախոսությունը նվիրված է սոցիալական հոգեբանական գիտակարգի արդիական և տեսագործնական նշանակություն ունեցող հիմնախնդիրներից մեկին՝ սոցիալ-հոգեբանական օտարացման երևույթի ուսումնասիրությանը ներթիմային արժեքապահանջմունքային կողմնորոշումների համակարգում: Ժամանակակից հասարակական զարգացումները, աշխատանքային հարաբերությունների բարդացումը, կազմակերպությունների ներսում փոխգործակցության նոր ձևաչափերի ձևավորումը, ինչպես նաև անձի ինքնության, արժեքների և միջանձնային հարաբերությունների վերափոխումները սոցիալ-հոգեբանական օտարացման խնդիրը դարձնում են առավել արդիական: Այս տեսանկյունից ընտրված թեման համապատասխանում է ժամանակակից սոցիալական հոգեբանության առաջնահերթ ուղղություններին և ունի ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն: Ատենախոսության կառուցվածքը տրամաբանական է և համապատասխանում է գիտական հետազոտության ընդունված պահանջներին: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Գլուխների հաջորդականությունը ապահովում է տեսական հիմնավորումից դեպի հայեցակարգային ընդհանրացում և այնուհետև՝ փորձարարական ստուգում անցնելու տրամաբանական ընթացքը: Աշխատանքում հիմնավորված են

հետազոտության արդիականությունը, ձևակերպված են նպատակը, խնդիրները, օբյեկտը, առարկան, վարկածը, ենթավարկածները, ներկայացված են տեսամեթոդաբանական հիմքերը, կիրառված մեթոդները, գիտական նորույթը, տեսագործնական նշանակությունը և պաշտպանության ներկայացվող դրույթները: Նշված բաղադրիչները հիմնականում փոխկապակցված են և արտացոլում են հետազոտության ընդհանուր տրամաբանությունը:

Առաջին գլխում հեղինակը համակողմանիորեն ներկայացնում է սոցիալ-հոգեբանական օտարացման գիտատեսական մեկնությունները՝ վերլուծելով ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից մոտեցումները: Առանձնակի ուշադրություն է դարձված օտարացման բազմաչափ բնույթին, «Ես»-«Օտար» փոխհարաբերությունների սոցիալ-հոգեբանական բովանդակությանը, ինչպես նաև աշխատանքային խմբերում օտարացման դրսևորումների առանձնահատկություններին: Հեղինակը ցուցաբերում է մասնագիտական գրականության բավարար իմացություն և տարբեր տեսական մոտեցումների համադրության փորձ: Երկրորդ գլուխը նվիրված է արժեքապահանջմունքային կողմնորոշումների համակարգի վերլուծությանը սոցիալ-հոգեբանական օտարացման համատեքստում: Կարևոր արժանիք է այն, որ հեղինակը չի սահմանափակվում արժեքների առանձին ուսումնասիրությամբ, այլ փորձում է բացահայտել դրանց գործառույթը ներթիմային փոխհարաբերություններում, համախմբվածության ձևավորման, ինքնագնահատականի և հոգեբանական մթնոլորտի կառուցման գործընթացներում: Ներկայացված հայեցակարգային մոդելը փորձ է օտարացման սոցիալ-հոգեբանական երևույթը դիտարկել որպես արժեքային, վարքային և հաղորդակցական բաղադրիչների ամբողջական համակարգ, ինչը նպաստում է հիմնախնդրի առավել ամբողջական ընկալմանը: Ատենախոսության երրորդ գլուխը ներկայացնում է փորձարարական հետազոտության կազմակերպումը, մեթոդական գործիքակազմը և ստացված արդյունքների վերլուծությունը: Հետազոտության կառուցվածքը տրամաբանական է, իսկ կիրառված վիճակագրական և հոգեչափական մոտեցումները հնարավորություն են տալիս ստուգելու առաջադրված վարկածները: Արդյունքների մեկնաբանություններն ընդհանուր առմամբ համապատասխանում են

հետազոտության նպատակին և թույլ են տալիս հիմնավորել հեղինակի տեսական եզրահանգումները: Ընդհանուր առմամբ, աշխատանքը բնութագրվում է համակարգվածությամբ, գիտական գրականության համեմատական վերլուծությամբ և ժամանակակից սոցիալական հոգեբանության հիմնադրույթների արդյունավետ կիրառմամբ: Հեղինակը կարողացել է համադրել սոցիալական հոգեբանության, անձի հոգեբանության, արժեքների տեսության և խմբային դինամիկայի վերաբերյալ տարբեր գիտական ուղղություններ՝ ստեղծելով հետազոտության միասնական տեսական հենք:

Ատենախոսության առանցքային գիտական բաղադրիչներից է հետազոտության վարկածի հստակ ձևակերպումը և դրա փորձարարական հիմնավորումը: Հեղինակի առաջադրած հիմնական վարկածը հիմնված է այն ենթադրության վրա, որ սոցիալ-հոգեբանական օտարացումը ներթիմային արժեքապահանջմունքային գնահատումների համակարգում դրսևորվում է արժեքային կողմնորոշումների բևեռացմամբ և ներխմբային համախմբվածության դիսֆունկցիոնալությամբ, իսկ հոգեբանական մթնոլորտն ու հոգեբանական տարածության պարամետրերը հանդես են գալիս որպես փոխկապակցված դետերմինանտներ: Նման ձևակերպումը համապատասխանում է ժամանակակից սոցիալական հոգեբանության միջառարկայական միտումներին և հնարավորություն է տալիս օտարացման երևույթը մեկնաբանել ոչ միայն որպես միջանձնային հարաբերությունների հետևանք, այլև որպես արժեքային համակարգի կառուցվածքային բաղադրիչ: Հատկանշական է նաև, որ հիմնական վարկածը լրացվում է երկու ենթավարկածներով, որոնք վերաբերում են, մի կողմից, կոնֆլիկտային հոգեբանական մթնոլորտի ձևավորմանը, մյուս կողմից՝ ներոտիզմի, սոցիալական ֆրուստրացիայի և փոխկախյալության դերակատարմանը: Այս մոտեցումը հետազոտությանը հաղորդում է բազմագործոնային բնույթ և նպաստում է ուսումնասիրվող երևույթի առավել ամբողջական բացահայտմանը: Ատենախոսության կարևոր առավելություններից մեկն այն է, որ հեղինակը փորձել է տեսական կառուցումները ստուգել փորձարարական եղանակով՝ համադրելով անձնային, խմբային և արժեքային գործոնները: Հետազոտության արդյունքները հիմնականում հաստատում են առաջադրված վարկածի հիմնավորվածությունը և ցույց են տալիս, որ ներթիմային

փոխհարաբերությունների որակը պայմանավորված է ոչ միայն հաղորդակցական գործընթացներով, այլև մասնակիցների արժեքային համակարգերի փոխհարաբերությամբ և օտարացման սուբյեկտիվ ընկալումներով: Ատենախոսության գիտական նորույթը, ընդհանուր առմամբ, հիմնավորված է: Հեղինակը սոցիալ-հոգեբանական օտարացման հիմնախնդիրը ներկայացնում է ներթիմային արժեքապահանջմունքային կողմնորոշումների համակարգի համատեքստում՝ փորձելով ձևավորել դրա ամբողջական հայեցակարգային մոդելը: Նորույթ է նաև հոգեբանական տարածության սուվերենության, թիմային համախմբվածության, ինքնազնահատականի, սոցիալական ֆրուստրացիայի և ներոտիզմի փոխկապակցված ուսումնասիրությունը մեկ միասնական տեսամեթոդաբանական շրջանակում: Առանձնակի ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հեղինակի կողմից մշակվել և կիրառվել են հեղինակային մեթոդական գործիքներ՝ «Անծանոթի պատկեր» պրոյեկտիվ մեթոդը, «Օտարի ինքնաընկալման» հարցաթերթիկը, «Օտարի ընկալման վարքային բնութագրերի» հարցաթերթիկը և «Օտարի արժեքային գնահատման» սանդղակը: Հեղինակային գործիքների մշակումը վկայում է հետազոտողի ինքնուրույն գիտական աշխատանքի մասին և կարող է հիմք հանդիսանալ հետագա հոգեչափական ուսումնասիրությունների համար: Հետազոտության մեթոդական ապարատը կարելի է գնահատել որպես բազմաբաղադրիչ և նպատակին համարժեք: Հեղինակը կիրառել է թեստային, սոցիոմետրիկ, պրոյեկտիվ, հարցաթերթային և գնահատման մեթոդների համալիր, ինչը հնարավորություն 'է տվել ուսումնասիրվող երևույթը դիտարկել տարբեր մակարդակներում: Հատկանշական է նաև, որ օգտագործվել են ինչպես միջազգային ճանաչում ունեցող մեթոդիկաներ («Մեծ հնգյակ», Ռոկիչի արժեքային կողմնորոշումներ, հոգեբանական տարածության սուվերենություն և այլն), այնպես էլ հեղինակային մշակված գործիքներ: Մեթոդական բազմազանությունը նպաստում է արդյունքների փոխադարձ ստուգմանը (տրիանգուլյացիային), ինչն էական առավելություն է սոցիալ-հոգեբանական հետազոտություններում: Միաժամանակ ցանկալի կլիներ առավել հանգամանորեն ներկայացնել ընտրանքի ձևավորման սկզբունքները, կազմակերպությունների ընտրության չափանիշները, ինչպես նաև յուրաքանչյուր խմբի

սոցիալ-ժողովրդագրական բնութագրերը: Այդ տեղեկատվությունը հնարավորություն կտար առավել ամբողջական գնահատելու արդյունքների ընդհանրացման սահմանները:

Փորձարարական հետազոտության արդյունքների ներկայացումն ընդհանուր առմամբ տրամաբանական է և համապատասխանում է առաջադրված խնդիրներին: Հեղինակը կարողացել է բացահայտել սոցիալ-հոգեբանական օտարացման, թիմային համախմբվածության, հոգեբանական մթնոլորտի, արժեքային կողմնորոշումների և անձնային որոշ հատկանիշների միջև վիճակագրորեն նշանակալի փոխկապակցվածություններ: Ստացված արդյունքները ոչ միայն հաստատում են տեսական դրույթները, այլև ունեն կիրառական նշանակություն կազմակերպական հոգեբանության, թիմերի կառավարման և աշխատանքային բարեկեցության բարձրացման ծրագրերի մշակման համար: Պաշտպանությանը ներկայացված դրույթները բխում են հետազոտության նպատակից, խնդիրներից և ստացված արդյունքներից: Դրանք տրամաբանորեն փոխկապակցված են և արտացոլում են աշխատանքի հիմնական գիտական բովանդակությունը: Հեղինակը հիմնավորում է, որ սոցիալ-հոգեբանական օտարացումը բազմաչափ երևույթ է, որի դրսևորումները պայմանավորված են ինչպես արժեքային, այնպես էլ վարքային և հաղորդակցական գործոններով: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ներթիմային համախմբվածության, հոգեբանական մթնոլորտի, հոգեբանական տարածության սուբյեկտիվ գնահատման և արժեքային կողմնորոշումների միջև գոյություն ունեն էական փոխկապակցվածություններ, որոնք կարող են դիտարկվել որպես աշխատանքային խմբերի արդյունավետության կարևոր սոցիալ-հոգեբանական նախադրյալներ: Արժանի է գնահատանքի նաև այն հանգամանքը, որ հեղինակը փորձել է սոցիալ-հոգեբանական օտարացման հիմնախնդիրը ներկայացնել ոչ միայն որպես բացասական սոցիալական երևույթ, այլև որպես խմբային գործընթացների և ինքնության ձևավորման սոցիալ-հոգեբանական մեխանիզմ, ինչը հետազոտությանը հաղորդում է տեսական ընդհանրացման ավելի լայն հնարավորություն: Ատենախոսության տեսական և փորձարարական նյութերի համադրումը թույլ է տալիս եզրակացնել, որ աշխատանքի հիմնական դրույթները բավարար չափով հիմնավորված են, իսկ ներկայացված

արդյունքները համապատասխանում են հետազոտության նպատակին և առաջադրված խնդիրներին: Հետազոտության գործնական նշանակությունը նույնպես ակնհայտ է: Ստացված արդյունքները կարող են կիրառվել կազմակերպական հոգեբանության, անձնակազմի կառավարման, աշխատանքային թիմերի ձևավորման, կազմակերպությունների հոգեբանական մթնոլորտի գնահատման, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական խորհրդատվության և վերապատրաստման ծրագրերի մշակման ընթացքում: Հեղինակի առաջարկած մոտեցումները կարող են օգտագործվել նաև ներխմբային կոնֆլիկտների կանխարգելման, թիմային համախմբվածության բարձրացման և աշխատանքային բարեկեցության բարելավման նպատակով: Միաժամանակ, ինչպես յուրաքանչյուր գիտական հետազոտություն, ներկայացված աշխատանքը նույնպես առաջ է բերում մի շարք հարցեր և քննարկման ենթակա դրույթներ, որոնք, սակայն, չեն նվազեցնում կատարված աշխատանքի գիտական արժեքը: Նշենք որոշ դիտարկումներ, որոնց շուրջ ակնկալում ենք ատենախոսի մեկնաբանությունները:

1. Ատենախոսության տեսական բաժնում սոցիալ-հոգեբանական օտարացման դասական և ժամանակակից մոտեցումների համեմատական վերլուծությունը հիմնականում ներկայացված է նկարագրական մակարդակում: Ցանկալի կլիներ առավել հստակ առանձնացնել հեղինակի սեփական տեսական դիրքորոշումը և ցույց տալ, թե ինչով է այն տարբերվում արդեն գոյություն ունեցող հայեցակարգերից:

2. Գիտական նորույթի ձևակերպումները մի շարք դեպքերում ունեն ընդհանրական բնույթ: Դրանք ավելի համոզիչ կլինեին, եթե յուրաքանչյուր նորույթ հստակ համադրվեր տվյալ ոլորտում արդեն իրականացված հետազոտությունների հետ և ընդգծվեր հեղինակի ներդրման ինքնատիպությունը:

3. Հեղինակային մեթոդիկաների կիրառումը աշխատանքի առավելություններից մեկն է, սակայն դրանց հոգեչափական հիմնավորումը ներկայացված է ոչ ամբողջական: Ցանկալի կլիներ առավել մանրամասն ներկայացնել վավերականության, հուսալիության, ստանդարտացման և փորձարկման արդյունքները:

4. Փորձարարական ընտրանքի նկարագրության մեջ բավարար չափով չեն ներկայացվել կազմակերպությունների ընտրության չափանիշները, ինչպես նաև ընտրանքի ներկայացուցչականության հիմնավորումը: Այս հանգամանքը որոշ չափով սահմանափակում է արդյունքների ընդհանրացման հնարավորությունները:

5. Ատենախոսության լեզվառճում և տերմինաբանական համակարգում առկա են առանձին ոչ միատեսակ ձևակերպումներ («արժեքապահանջմունքային», «արժեքա-պահանջմունքային», «ներթիմային», «ներխմբային» և այլն):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ Տաթևիկ Զորիկի Վաթյանի «Սոցիալ-հոգեբանական օտարացման հիմնախնդիրը ներթիմային արժեքապահանջմունքային կողմնորոշումների համակարգում» թեմայով վերնագրով ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն, գիտական բարձր մակարդակով կատարված հետազոտություն է, որն ունի գիտատեսական և գործնական նշանակություն, արդյունքները հավաստի են: Այն համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման 7-րդ կետի պահանջներին և ԺԹ.00.03. թվանիշով՝ «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ, իսկ հեղինակը՝ Տաթևիկ Վաթյանը իր կատարած հետազոտական աշխատանքով գնահատվում է որպես հասուն գիտնական և արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Պաշտոնական ընդդիմախոս՝

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Արայիկ Ֆիրյան

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Ֆիրյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային
կենտրոնի գիտքարտուղար՝ Մ. Սարգսյան